

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
19.01.2024թ. հարցման կարգով կայացած նիստի
թիվ 3 արձանագրություն**

Օրակարգ

Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Անի Արամի Պետրոսյանի թեկնածուականատենախոսության թեմայի (Ժ.02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ) և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Անի Արամի Պետրոսյանի թեկնածուականատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը: Ատենախոսության թեման՝ «Անջատական հարցերի լեզվագործաբանական բնութագիրը (միջմշակության հայեցակերպ)», Ժ.02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ), գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Աստղիկ Էդվարդի Չուբարյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ս.Ք.Գասպարյանը, ինչպես նաև հայցորդի գիտական ղեկավար, Բ.Գ.Թ., պրոֆեսոր Աստղիկ Չուբարյանը:

Նշվեց, որ աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրելու անջատական հարցերի գործաբանական, իմաստաբանական, կառուցվածքային և հաղորդակցական-գործառնական առանձնահատկությունները: Աշխատանքը լայն իմաստով նվիրված է լեզվաբանության կարևորագույն բնագավառներից մեկին՝ խոսքաստեղծման և խոսքընկալման մեխանիզմների ուսումնասիրությանը, իսկ հետազոտության բուն խնդիրը անջատական հարցերի բազմակողմանի քննությունն է անգլերեն դիսկուրսում, հայերենի, ռուսերենի, ֆրանսերենի համապատասխան շարահյուսական կառույցների գույքադրությամբ: Աշխատանքի համար տեսական հիմք է ծառայում միջմշակության գործաբանական լեզվաբանությունը, որի հիմնական խնդիրն է ուսումնասիրել խոսքային գործունեության առանձնահատկությունները միջմշակության տեսանկյունից՝ դիտելով այդ գործունեությունը որպես խոսող անհատի կողմից գիտակցաբար կառավարվող և խոսքին հատուկ օրենքներով կանոնակարգվող գործընթաց: Աշխատանքի նորույթն այն է, որ անջատական հարցերի վերլուծությունը, ըստ էության, առաջին անգամ է իրականացվելու կառուցվածքային-իմաստաբանական, գործաբանական և գործառնական յուրահատկությունների յույսի ներքո, որտեղ լեզվական միավորի կառուցվածքը երկետային է խոսքում նրա գործառնական-հաղորդակցական առանձնահատկությունների համար: Նոր է նաև անջատական հարցերի գործաբանական ներուժի որպես ներակայման ձևի արժևորումը, ինչպես նաև այդ ներուժի կողավորման և ապակողավորման մեխանիզմների քննությունը գործաբանական-ճանաչողական և միջմշակության հաղորդակցության դիրքերից: Աշխատանքի գործնական արժեքն այն է, որ ուսումնասիրության արդյունքները թույլ կտան առավել համալիր մոտեցում ցուցաբերել միջմշակության լեզվագործաբանության, տեքստի լեզվաբանության և դիսկուրսի վերլուծության առարկաների դասավանդումը կազմակերպելիս: Նրանք կնպաստեն անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ կառուցման հմտությունների յուրացմանն ու զարգացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Անի Արամի Պետրոսյանի թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը: Ատենախոսության թեման՝ «Անջատական հարցերի լեզվագործաբանական բնութագիրը (միջմշակության հայեցակերպ)» (Ժ.02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ), գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Աստղիկ Էդվարդի Չուբարյան: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի
ղեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ՝



Գ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ՝



Մ. Դալայան

19.01.2024թ